

Յիշատակ է քոցս Ալմաս իդեցկնոջ և իւր առն աէր Լուսիկին և ծնաւդացն մահդասի Աստուածաւորին և Ալթնպըքային. ի դուռն Պէշտէկիդմանու սուրբ Աստուածածնի. թվին ՌՃԼԸ (1689):

Հրսուտ. Սահփանե, 17:

243. Մասնապահարանի խաչի վրա՝

Յիշատակ է սուրբ խաչս մ[ա]յ[Ն]Լ[ու]ս[ի]կ[ին] Սիմաին, մ[ա]յ[Ն]Լ[ու]ս[ի]կ[ին] Մինասին, մ[ա]յ[Ն]Լ[ու]ս[ի]կ[ին] Մէկէնսին, Պետրոսին, թվին ՌՄԼԲ (1783):

Հրաւ. Սահփանե, 17:

244. Առանց կոթառի խաչի վրա՝

Յիշատակ է սուրբ նշանս Կիրակոս վարդապետին:]

Հրսուտ. Սահփանե, 17:

Ղրիմի Ս.Խաչ վանքից 3 կմ հեռավորութեամբ, անառապա լեռան լանջին, 1356 թ. կառուցվել է եւ մեկ առաջին Ս. Սահփանոս անունով: Մ. Բժշկյանի շրջադաշտի օրոք այն եղել է քանդված: Ուսումնասիրողը նկատել է եկեղեցու, խորանի, չորս կամարների և սլարիսպների հետքերը: Տաճարի մեջ եղել է ջրհոր, որի կառուցման առթիվ կանգնեցված խաչքարն ունեցել է հիշատակադրություն: Պարսկապատերի ներսում գտնվել են յոթ սենյակների հիմնաքարերը⁵⁴: Սուրբ Խաչի վանահայր խորեն Սահփանեի առաջնորդության տարիներին այդ աղբյուրը դեռեւս ընկել է⁵⁵:

ԲԵԼՈՒՄՈՐՄԻ ԾՐՋԱՆԻ ՀԱՅԿԱԿԱՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ ԵՎ ՆՐԱՆՑ ՎԻՄԱԳՐԵՐԸ

ԲԵԼՈՒՄՈՐՄԻ ՔԱՂԱՔ

/ՆԱԽԿԻՆ՝ ՂԱՐԱՍՈՒ, ՂԱՐԱՍՈՒ-ԲԱԶԱՐ/

Բելոգորսկը գտնվում է Սիմֆերոպոլ-Թեոդոսիա մայրուղու վրա: Քաղաքը շրջապատված է կանաչավեա լեռներով, որոնց հարավային լանջերից ընկած է Ղարասու (Սե ջուր) գետը եւ, անցնելով քաղաքի ասարածքով, թափվում Սիվաշի ծովածոցը:

Սնեցի Հայերի գանգավածային գաղթի ժամանակ՝ 1330 թ. Ղարասուի մերձակայքում հիմնադրվում են նորանոր բնակավայրեր եւ կրթամշակութային օջախներ: Հայաբնակ խաչքար (Սե խաչ) թաղամասում հետադաշտում բնակություն են հաստատում բացառապես պարսկահայերը: 1779 թ. ապրիլի 21-ից հետո, երբ Ղրիմը վերջնականապես անցնում է ռուսական կայսրությանը, Ղարասուրազարում տեղի են ունենում քաղաքական եւ սոցիալ-մշակութային մի շարք փոփոխություններ: Սյա քաղաքը, ինչպես նաեւ Հին Ղրիմը, ձեռք էին բերել ներքին ինքնավարու-

⁵⁴ Մ.Բժշկյան, Ժամապարհորդություն, էջ 328:

⁵⁵ Խորեն Ստեփանե, էջ 33

թյուն: Ղարասուբաղադարում զործում էր հայոց զառարանը⁵⁶, Հին Ղըխում՝ հայոց քաղաքային ուստուշան (քաղաքապետարանը)⁵⁷:

Մինչև XIX դարի երկրորդ կեսը Ղարասուբաղադարում կար հինգ եկեղեցի, որոնցից երեքը պահպանում էին հայերին:

1810 թ. մայիսի 1-ին հիմնադրվում է Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին, որն ունի 1813 թ. փետրվարի 2-ին⁵⁸ Լեհաստանի Մոյլով այժմ՝ Մոզլիլ-Պոդոլսկ քաղաքի կաթոլիկահայության առաջնորդ Հովսեփ եպիսկոպոս Քրիստափորովիչի ձեռքով⁵⁹:

Տասր ասորի անց, 1823 թ. մայիսի 1-ին, եկեղեցուն կից բացվում է դպրոց, որանդ աշակերտները այլ առարկաներին զուգընթաց սովորում են հայերեն, ռուսերեն, ֆրանսերեն և արաբերեն⁶⁰:

Ղարասուբաղարի հայկական այս եկեղեցին եղել է քաբաշեն. ունեցել է 50 ոտնաչափ լայնություն և 80 ոտնաչափ երկարություն, եռախորան՝ 8 լուսամուկներով. ծածկը հենվել է վեց մեծամեծ սյուների վրա: Կառուցմանը նպաստել են «Պապի աղայ, Մուրաաչայ աղայ, Ասաուածաուուր աղայ, Պեարուս աղայ»: Վերակացուն եղել է Մերկյան Մըողայանը⁶¹: Գրիգոր Լուսավորիչ եկեղեցին պահպանադարձվել է 1829 թ., Մինաս Բժշկյանի առաջնորդության տարիներին⁶²:

245. Այս եկեղեցու կամտրակասլ ճակաուին եղել է հետևյալ արձանագրությունը.

Մեծապանծ տաճար քաուութեան տեւի,

Նուիրեալ անուան սրբոյն Գրիգորի.

Ի յաջորդութեան սէր Խաչատուրի,

Եղե. Հիմնարկեալ ի սոյն նոր անդի.

Ջանիւք ե. տրրովք կաթուիկ հօսի.

Յեւ երից ամաց ի կաուար յանգի

Եւ յեւ երկ ամազ փաուօք օծանի.

Պահպանուական աշխ մէրունի,

Հասաաա սահեսցէ զմեզ զայս սր յարկի:

Հրաա. Բժշկյան, 251, Տեր-Աբրահամյան, Բ, 112:

Ղարասուբաղարի Աուրը Ասավածածին հայոց եկեղեցին կառուցված է եղել քաղաքի հարավային մասում, պարանդի մեջ. ունեցել է վանաուուն, զրաաուուն և հնությունների թանդարան: Մինչև 1790 թվականը կոչվել է սուրբ Օղսենարիու: Միաոթամանակ վերածված է եղել մղկիթի, ապա վերստին օծվելուց հետո կոչվել է Ա.Ասավածածին⁶³: Վերակառուցվել է մի քանի անդամ:

246. Մուաքի դուան վերեուում եղել է հետևյալ հիշատակադրությունը.

56 Հայ ժողովրդի պատմություն, Բ. 6. էջ 651:

57 Նույն տեղում:

58 Յովհ. Տէր-Արրախանյան, Բ, էջ 178, ծանոթ. 80:

59 Նույն տեղում:

60 Մ.Բժշկյան, էջ 252

61 Նույն տեղում, էջ 249:

62 Նույն տեղում:

63 Հովհ. Տէր-Արրախանյան, Բ, էջ 113

Վերստին նորոգեցաւ սուրը Օգսենտ եկեղեցին. զի յառաջ հնացեալ էր, յետոյ վասն մեղաց մերոց յարեցաւ, իսկ աւստուածային հրամանաւն և յիրոյ սուրը եկեղեցոյս վասն որոյ իսկ սէպէպ եղև Թեանի աղան սորայ. բազում աշխատանս կրեաց մինչև աւարտումն սը տանս ամենայն՝ կողմանէ. իղնի շէրով Թագաւորի հրամանաւ շինեալ կառարեցաւ, յիշատակն օրհնութեամբ ելիցի իւրեան որդւոյն և զաւակացն և ամենայն՝ զարմից կամ եօթնպորաին եւ յոռաւել ըարի ծնողացն հողւոյն. ամէն. կամ Ղարաուուի եղեալ ժողովուրդքս այր և կին ամենեքեան օգնութիւն արարին մինչ ի աւարտումն սուրը եկեղեցոյս. ողորմի իւրեանց ծնողացն, շատ և քիչ աշխատանք կրողացն. ամէն: Այս սը եկեղեցիս Ծէթիչէն մնացեալ էր. այս եղև Թվին ՌՃՁԴ (1735):

Ծանոթ. *Իղնի շէրով կապակցությունը ըստ պրոֆ Լ. Դ. Փափազյանի նշանակում է Շարիաթի թույլաւթյամբ:*

Հրատ. *Բժշկոյն, 246, Տեր-Արրահամյան, Բ, 114:*

247. Տապանաքար, *Ս. Օգսենտ եկեղեցու թակում: Նախկինում հայտնի է եղել իրրե «Նահատակի գերեզման»: Տապանաքարի վրա՝ 10 տող.*

Այս շիրիմս է հանգստի

Ի յերկրէն արեւելցի,

Ի գիւղէն Շըրջվանցի,

Եւ է որդի Ագիզ պէկի,

Իւր անունն է Ֆռանկուլի,

Քսան ամաց նահատակի.

Կանխիւ մահուամբըն կաարի,

Վասն հաւատոյ սը ճշմարտի՝

ՌՄՁ (1757) թուականի,

Յունիսի ամսոյ մէկի:

Ծանոթ. *Միթար վ. Տեր-Մկրտչյանը նշում է. «Նահատակի գերեզմանը» գտնվելիս է եղել «Տաւրիկեան նահանգի Ղարաուուրաղար քաղաքի Աւստուածածին եկեղեցու գաւթում»:*

Հրատ. *Բժշկոյն, 246, Հայոց նոր վկաները, 568:*

248. *Ղարաուուրաղարի Լուսաւորիչ եկեղեցի. պատկերներից մեկի տակ՝*
Արդեամբք Գայիանեայ ըարեպաշտ տիկնոջ Տիւկիւճեան ի յիշատակ ամուսնոյ իւրոյ մեծանուն աղայ Սաեփանի Ամպարեան. Ի Թվին Հայոց ՌՄՀԵ (1826):

Հրատ. *Բժշկոյն, 249:*

249. *Հնկուղենուց պատրաստված դռան երկու իւղկերին. ձախ փեղկին՝*

Աստուածարնակ սուրը տաճար/իս

Դուռն մաից կե/նաց յարկես

Կանգնեալ յանուն սուրը Աստուածածնիս:

250. Աջ փեղկին՝

է յիշ[ատակ] Համալերէն ժողովրդեանս. ԹՎ. ԶԿԱ. (1512):

Ծանոթ. Քուչուկ-Հովհաննիսյանի վերծանությունը սխալաշատ է:

Օրինակ՝ «դուռն մաից» նա ընթերցել է «Դուռն Ամրատի»: Հնադեա Լ. Պ. Կոլլին կարծում է, թե այս դուռը ընդմիջ է Անիից: Քուչուկ-Հովհաննիսյանն իրավացիորեն առարկում է. ենթադրելով, որ այն պատրաստվել է Ղարաուրաղաղում՝ Անիի տաճարների դռների նմանակությամբ⁶⁴: Հիշյալ դռներն այժմ գտնվում են Ա Պետերբուրգի էրմիտաժի արևելյան բաժնի ցուցասրահում:

Հրատ. Բժշկյան, 250:

251. Գրիգոր Լուսաւորիչ եկեղեցուն կից ուսումնարանի գոան ըարավորին.

Ճեմարան պայծառ. վարժելեաց աւելի,

Վայր իմաստութեան ըպմաց ցանկալի՝

Կանդնեալ ի պատիւ սրբոյն Գրիգորի

Տրովք մեր եղբարց ուղղափառ. հօտի.

Առաջնորդութեամբ Բժշկեան պետի՝

Հայր Մինաս վիքար⁶⁵ մեր վարդապետի,

Աջով ըարձրելոյն ի կատար բերի.

Նոյն վառ. պահեսցէ ուսմամբ ոլանծալի. 1823:

Հրատ. Բժշկյան, 252:

Բեղոգորսկի հայկական գերեզմանոց

Հին գերեզմանոցն այժմ դոյություն չունի: Նորը գտնվում է այստեղից դեպի Թեոդոսիոս գնացող մայրուղու աջակողմյան բլրակի վրա, ցանկապատի մեջ: Վիճաբերը թեև ժամանակով նոր են, սակայն որոշակի արժեք են ներկայացնում ղրիմահայության պատմության հարցերով պարզվող մասնագետների համար: Ահա գրանցից մի քանիսը.

252. Տապանաքար, վրան թեւավոր խաչ, որի ստորեւ՝ 6 առդ.

ԱՅՍ Է ՏԱՊԱՅՆ/ ՍԱՄՈՆ ՄԱԼԽԱՍԵԱՆԸ՝ ԱԽԼԱԹՅԱՆ ԱՂԱՂՆԻ/ ՅՇԱՏԱԿ ԳՈԼՈ
ԴԱ/ՎԻԹԵԱՆ.../ 1918 ՆԷՔԵՐԻ ԱՄՍՈՋ 5:

253. Տապանաքար, սպիտակ մարմարից, շրջված վիճակում, աակը փորփորված:
Վրան անվարժ ճեռապրով՝ 5 առդ.

ՀԱՆԳԻՍՏ/ ԳՐԻԳՈՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆ/ ՄԱՄԻԿՈՆԵԱՆ/ ՎԱԽՃԱՆԵԱԼ 28 ԴԵԿՏԵՄԲԵ-
ՐԻ 1898 Թ./ Ի ՀԱՍՍԿԻ 66 ԱՄԱՑ:

254. Տապանաքար, դեղնավուն կրաքարից, նախորդի մոտ: Վրան՝ 5 առդ.

⁶⁴ Кучук-Иоаннесов, Армянская надпись из Карасубазара. Труды Восточной комиссии Московского археолог. общества, т. II. вып. 3, М., 1903, с. 3. Տե՛ս նաև՝ В. Виноградов, Феодосия. Ист. очерк, Екатеринодар, 1902, с. 73.

⁶⁵ Վիքար-տեղապա՛ս, լատիներէն vicarius-տեղակալ